

# ՍԱՂՄՈՍ 123

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
ՏԻՐՈՋ օգնության համար աղոթք	Արհամարհանքից ազատվելու համար աղոթք	Թշնամիներից ազատվելու համար աղոթք (Ողբ)	Ողորմության համար աղոթք	Աղոթք նեղության մեջ
<u>MT ներածություն</u> Աստիճանների երգ				
123:1-2	123:1-2	123:1-2	123:1-2	123:1-2բ 123:2գ-զ
123:3-4	123:3-4	123:3-4	123:3-4	123:3-4բ 123:4գ

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻՎԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)

*ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ*

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

### ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 123:1-2**  
**<sup>1</sup>Դեպի Քեզ եմ բարձրացնում աչքերս, ո՛վ երկնքում Բնակվող:**  
**<sup>2</sup>Ահա, ինչպես ծառաների աչքերն են նայում իրենց տիրոջ ձեռքին,**  
**Ու ինչպես աղախնու աչքերը՝ տիրուհուն ձեռքին,**  
**Այնպես էլ մեր աչքերը ՏԻՐՈՋԸ՝ մեր Աստծուն են նայելու՝**  
**Մինչև մեզ ողորմի:**

**123:1** Սա նման է Սաղմ. 121:1-ին (աչքերը վեր բարձրացնելը աղոթքի ժեստ էր): Սաղմ. 121:2-ում «երկինք» վերաբերում է երկրից վեր մթնոլորտին (տես՝ Ծննդ. 1:1), սակայն այստեղ՝ Աստծո զահին (տես՝ Սաղմ. 11:4, 103:19, Եսայի 66:1): ՅԱՀՎԵՆ Տիեզերքի Թագավորն է: Նա գոյություն ունեցող՝ թե՛ ֆիզիկական և թե՛ հոգևոր ամեն ինչի Արարիչն է:

1. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔ
2. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԵՐԿԻՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿԻՆՔԸ

Ինչպես որ շատ տարածված է Սաղմոսներում, անհատի և հավաքականի միջև գոյություն ունի սահուն անցում: Այս Սաղմոսը սկսում է «ես»-ով և արագ կերպով անցում կատարում «մենք»-ի:

**123:2** «Ձեռք» բառը (BDB 388, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ) ինչ-որ բանի վրա իշխանություն ունենալու դարձվածք է (այսինքն՝ տեր, տիրուհի): ՅԱՀՎԵՆ իշխանության և տիրակալության բարձրագույն աղբյուրն է: Նրա ժողովուրդը նայում է Իրեն:

❖ **«ՏԵՐԸ մեր Աստվածը»** Սա նման է Ծննդ. 2:4-ում առաջին անգամ կիրառված անվանը, որը համադրում է ՅԱՀՎԵՆ և *Էլոհիմը*: *Էլոհի* հավանաբար ԵՉԱԿԻ ձևն է: Այս կրկնակի անունը համադրում է Իսրայելի Աստծո երկու առանձնահատկություն:

1. այս մոլորակի վրա բոլոր տեսակի կյանքի արարիչը, պահապանը և մատակարարը – *Էլոհիմ*
2. փրկիչ, ուխտ կապող Աստված – ՅԱՀՎԵ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ, Գ. Դ.

❖ **«մինչև /Նա/ մեզ ողորմի»** Սաղմոսերգուի իրավիճակը նկարագրվում է Սաղմ. 123:3-4-ում: Նա համբերատար սպասում է, որ Աստված կգործի իր համար (*Qal* ԱՆԿԱՏԱՐ): Նա կանչում է Աստծուն աղոթքով Սաղմ. 123:3-ում (երկու *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) գործելու իր կողմից՝ Իր գթառատության և ողորմության համաձայն (BDB 335, KB 334):

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 123:3-4**  
**<sup>3</sup>Ողորմի՛ր մեզ, ո՛վ ՏԵՐ, ողորմի՛ր մեզ,**  
**Քանի որ չափազանց լի ենք անարգանքով:**  
**<sup>4</sup>Չափազանց լի է մեր անձը հանգիստ ապրողների ծաղրուծանակով**  
**Ու բարձրամիտների արհամարհանքով:**

**123:3բ-4** Ինչպես որ շատ հաճախ է տեղի ունենում Սաղմոսներում, հեղինակը զգում է հարձակման տակ (այստեղ նա արտահայտում է նաև հավաքական իմաստով): Այստեղ հարուստ, իշխանավոր իսրայելացիներն են (այսինքն՝ Եսայի 32:11, Ամով 6:1): Նրանց գործողությունները լցնում են իրեն «արհամարհանքով» (BDB 100) և «ծաղրուծանակով» (BDB 541): Անշուշտ հնարավոր է, որ Սաղմոս 122 և 123 արտացոլեն Եզրասի, Նեեմիայի ժամանակները: Հաճախ նմանատիպ մարդիկ գործում են կարծես թե իրենք տերերն են, սակայն սաղմոսերգուն գիտի, որ ՅԱՀՎԵՆ է իրական և բարձրագույն Տերը: Կյանքը հաճախ անարդար է և համբերատար աղոթք և ճիշտ աշխարհայացք է պահանջում:

UBS *Ձեռնարկը* (էջ՝ 1059) պնդում է, որ «3-4 համարների լեզուն նկատի ունի, որ թշնամիները օտարազգիներ էին, ոչ թե իսրայելացիներ»: Բայց Սաղմ. 123:3-4-ում ես ոչինչ չեմ տեսնում, որը կապացուցի սա, և հետզհետեության շրջանի Երուսաղեմի խնդիրները ավելի շատ են համապատասխանում այս համատեքստին:

**123:3 «Ողորմի՛ր մեզ»** Այս ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ (BDB 335, KB 334) կրկնվում է շեշտադրության համար: Սաղմոսերգուի իսրայելացի ընկերները ամեն բան էին, բացի «ողորմած լինելուց»:

Սաղմոսերգուն «լցված» է (BDB 959, KB 1302, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ)

1. արհամարհանքով (BDB 541)
2. ծաղրանքով (BDB 100)

այդ հարուստ իսրայելացիների հանդեպ, ովքեր շահագործում էին իրենց ուխտակից եղբայրներին (տես՝ Եզրաս, Նեեմիա):

1. նրանք հանգիստ են
2. նրանք հպարտ են

**123:4 «անձ»** Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. NEPHESH